



## Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր Ը\*

Հակառակ քրիստոնյաներուն տրված ահռելի ջարդին, դեռ դադրած չէր հալածանքը: Ով որ իբրև քրիստոնյա կամբաստանվեր, բանտ կտարվեր քաղաքապահ զինվորներեն: Բայց զոհերը այլևս սակավաթիվ էին, մնացյալները կա՛մ հեռացած էին Հոռմեն և կա՛մ կորսնցուցած իրենց հետքը: Արյունին հոտը սակայն տակավին կմնար թանձրացած քաղաքին վրա, ինչպես մշուշի կպշուն տրտմությունը անձրևեն հետո:

Այդ օրերուն կհաստատվեր Ներոնի ձերբազատներեն մեկուն քրիստոնյա ըլլալը, որովհետև անոր քով գտնված էր Պողոսի թուղթերեն օրինակ մը: Հայտնի եղած էր թե առաքյալը տակավին ողջ կը մնար: Կեսարը հրամայած էր գտնել գրլխավորը քրիստոնյաներուն: Պրետորականներու ջոկատը լծված էր գործի:

Ո՛ր էր սակայն առաքյալը աղետի այդ օրերուն. բայց ո՛ր չէր ան: Բանտեն ազատվելեն վերջ, փոթորիկի մը մման վազած էր Հոռմեն Եփեսոս, Թեսաղոնիկե, Կորնթոս, Նիկոպոլիս, Բերիա, Փիլիպպե, Մակեդոնիա, Գաղատիա, բոլոր այն տեղերը ուր

\* «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում 1975 թվականին ս. Հակոբյանց վանքի տպարանից հրատարակված Շրուսաղենի հայոց ամեն. տ. Եղիշե սրբազան պատրիարքի «Հեթանոսաց Առաքեալը» գրքից սույն գույլը:

«Հեթանոսաց Առաքեալը» գրքի մասին գրախոսությունը տեսնել «Էջմիածին» ամսագրի 1976 թվականի № 7-ում (էջ 40—47):

տարիներով Մեսիայի հավատքին սերմը ցանած էր: Հոռմի հրդեհի օրերուն, քրիստոնյաներու ողբերգությունը լսելեն հետո, քաղաք վերադարձած էր, հակառակ իրեններու աղերսանքներուն:

Քրիստոնյաներեն ոմանք գիտեին Պողոսին տեղը, և խորհուրդ կուտային իրեն չերևիլ և կամ հեռանալ քաղաքեն: «Հեռացիր, ով նվիրական գլուխ, որպեսզի պաշտպանվի քու մեջդ եղած կենդանի ճշմարտությունը»: «Զավակներս», կպատասխաներ ան, «ո՛վ կրնա գիտնալ ժամը իր վախճանին. արտերը ունին իրենց ժամանակը սերմ ընդունելու, ծառերը պտուղ տալու, այնպես ալ մարդերը իրենց նսեհին երթալու: Ամեն օր իր սկիզբն ու վախճանը ունի, արևածագը որ իր ողջույնը կբերե և վերջալույսը որ հրաժեշտ կառնե, վերստին չեն հանդիպիր մեզի: Մենք սերմեր ենք Աստուծո ափով այս մուրրակի վրա նետված. մեր հատունության շրջանին է որ կտարվինք մահվան մանգաղեն, որուն ժամանակը միայն սերմնացանը գիտե:

«Կարճ եղան իմ օրերս ձեզի հետ, բայց մենք կրցինք իրարու միացնել մեր սիրտերու խոստումը, միասին երթալու ճշմարտության: Մեր սրտերը այժմ միասին կտրոփեն, որովհետև կզգան իրարու ցավն ու բերկրանքը: Մի վախճաք, մահն ու կյանքը նույնն են, ինչպես գետն ու ծովը: Մահը միայն պատգամավորը չէ երկնքին, այլ նաև հայտնիչը ճշմարտության: Մարդը ավելի խոր բաղձանքներ ունի իր հոգիին մեջ քան իր լեզվին վրա: Բառերը փըշրանքներ են հոգիի և մտքի խրախճանքի

սեղանեն վար ինկած: Երբ զգաք ճշմարտության և գերագույն կյանքի տրոփումները, մահն անգամ գեղեցիկ պիտի երևի ձեզի: Աշխարհ մահ բերողները միայն կվախենան մահեն, որ ուրիշ բան չէ բայց փոխադրությունը այս աշխարհեն մյուս աշխարհը»:

«Ավելի քան երեսուն տարի է կքայեմ տառապանքի և մահվան ճամփայեն, հանձնած ինքզինքս Անոր՝ որ գիտի Իր ծառայությանը կանչեց: Ան բացավ այս ուղին ոտքերուս՝ և Ան միայն կրնա նախատեսել վախճանը որ ինձի կապատե. օրհնյալ ըլլա Իր կամքը: Ամեն գոցվող դռան ետև յոթ կնիքներով կնքված գաղտնիք մը կա, գորս մեր ձեռքերը չեն կրնար բանալ»:

Իր հոտը ցիրուցան եղած էր: Նորաբույս եկեղեցին որ դայար ծառի մը նման սկսած էր աճիլ Հոռոմի հրդեհեն առաջ, այժմ ճղակոտոր կմնար, «Գազան»-ին ճիրաններեն փշրված: Բայց կհավատար թե ճշմարտությունը չէր կրնար թաղվիլ և վերջնական հաղթանակը իրեն միայն կրնար ըլլալ: Հետո, ինչպե՞ս կրնար լքել քաղաքը, որուն հողը այնքան մարտիրոսներու արյունով էր թրջված և ուր այնքան հավատավոր սիրտեր իրենց մահով վկայեք էին ճշմարտության:

Իր հոգին մահվան չափ տխուր էր բոլոր անոնց համար, որոնք հոշոտված էին, խաչված կամ ողջ-ողջ այրված կրկեսի և կամ Կեսարի պարտեզներուն մեջ: Այս բոլորին համար ինք քուն չունեք տիվ ու գիշեր: Հաճախ անքերելի ցավին մեջ իր շրթները կմոմնջեին. «Տե՛ր, ինչո՞ւ հրամայեցիր ինձի որ «Գազան»-ի այս որջին մեջ գամ հիմնելու քու եկեղեցիդ»: Մյուս կողմեն կմտածեք թե բոլոր անոնք որոնք մեռած էին իրենց հավատքին համար, կըբերեին չմեռնող գաղափարի աղամանդ պարք: Անոնց հոգին գտած էր հավերժական խաղաղությունը և անոնց տառապանքը հալած էր ինչպես նարդոս լուղին բույրը որ կլեցնե օդը: Անոնք մեռած էին ապագայի երագին ճամփուն վրա, որպեսզի ողջերը կարենային շարունակել գայն: Վասնզի ողջեր չեն ապրիր, երբ մեռելներուն երազը մեռի:

Տեսիլքեն վերջ տարիներով վազած էր ամեն կողմ, տառապանքի շեղքը իր սրտին մեջ, բայց հույսին ծախսը իր շրթներուն՝ տանելու Մեսիայի գալստյան «բարի լուր»-ը մարդերուն: Տաժանքներու և զրկանքներու մեջ նվազած էին իր ուժերը, բայց ինք չէր թերացած իր պարտականությանը մեջ և եկած էր հավիտենական այս քաղաքի կուրծքին վրա հաստատելու եկեղեցին: «Ո՛վ Տե՛ր, դուն ինձի հրամայեցիր նվաճել

այս աշխարհակալ ոստանը, ու ես նվաճեցի: Ան այլևս քու քաղաքդ պիտի ըլլա»: Իր կյանքը եղած էր երկար շրթա մը սխրագործություններու, ծարավի հոգի մը՝ որուն հանգիստը միայն աշխատանքով կրնար վարձատրվիլ: Աստվածային գիտության և ճշմարտություններու աղբյուր մը եղած էր ինքը, սկիզբ առած հավիտենության կուրծքեն, մարդոց բերելու կենդանի ջուրը, թարմացնելու համար անոնց հոգիները: Արյան ծարավի զայրույթը քանդել ուզած էր իր գործը, բայց չէր կրցած արմատախիլ ընել: Կեսարը, ծերակույտը, լեգեոնները երկաթե շրջանակի մը մեջ պինդ կսեղմեին աշխարհը, սակայն ինք կզգար թե Սաչին հրաշքը ավելի ներգոր էր քան հոռոմեական արծվին ճիրանները: Բոլոր այս մտածումները կանցնեին իր բոցավառ ուղեղեն, երբ կյսեր աղաչանքները իր հոտի մնացորդացին որ հեռանար Հոռոմեն:

Անոր հոգին նման էր այն մշտավառներուն, որոնք հանգչելու ատեն իրենց ամենեն գորավոր բոցը կարձակեն:

Նույն իրիկուն իսկ գնաց Ոստրիոնի գերեզմանոցը, քարոզելու և մկրտելու: Այդ օրեն սկսյալ ամեն օր հոն կերթար, իր ետևեն տանելով հարաճուն բազմություն մը: Մարտիրոսներու թափած արյան կաթիլներեն կարծես թե նոր հավատացյալներ կծնեին, փոթորիկը փոխանակ խախտելու, ավելի ամրացուցած էր անոնց հավատքին արմատները: Ի վերջո հավիտենական էր ճշմարտությունը թե ցորենահատը մեռնելեն վերջ միայն կարդունավորվեք:

Քանի մը օրեր հետո Պողոս առաքյալը ձեռքակալված Պրետորականներեն, շրթայակապ կառաջնորդվեք դեպի բանտ: Կըքալեք Հոռոմի այրած փողոցներու մեջեն, ուր հազարավոր գերիներ լծված էին քաղաքի մաքրության գործին: Իր բարեկամներեն ոչ ոք կար իր հետը, որովհետև ձեռքակալությունը եղած էր գիշերով: Դատավարությունը տևած էր շատ կարճ. «Քրիստոնյա եմ», ըսած էր առաքյալը, առանց հիշելու իր Հոռոմի քաղաքացի ըլլալը:

Հաջորդ օրը, արևածագին, զինվորներեն շրջապատված կտարվեք իր մահավայրը, «Ագուն Սալվիե» հրապարակը, ոչ շատ հեռու Վատիկանյան բլուրեն: Լուռ էր ամեն կողմ, երկինքը արևելքեն կգունավորվեք թեթև կանաչորակ երանգով մը, եզերված ատիճանաբար քրմագույն ծիրով: Հետո արևելքը կսկսեք վարդագույն ներկվիլ և լուսավորել հեռավոր բլուրները՝ հրաշալի բեկբեկումներով: Ոսկեգօծ ատտվան մեջ կծփար թափանցիկ խաղաղություն մը, հոգին դեպի երկինք քարձրացնող:

Պողոս այժմ կհիշեր իր ուղևորությունները, պայքարները, քրտինքով և արյունով ողողված, և կխորհեր թե կատարած էր իր ընթացքը: Սորվեցուցած էր մարդոց սիրել, որ վեր էր աշխարհի գանձերեն և գիտություններեն: Իր կյանքը գրավ դրած էր ի հաշիվ մարդոց բերվելիք ճշմարտության և կմեկներ աշխարհեն այն մեծ հավատքով թե իր քարոզած ճշմարտությունը հավիտենական էր:

Այժմ հեռու իր սիրելի Տարսուսեն և սրբազան Երուսաղեմեն, կերթար իր տուրքը տալու Մեսիային: Անդին, Կյուսնուսի հեռավոր ջուրերու ափին, իր մայրը անվավճան գիշերվան խորեն, տեսա՞վ արդյոք հոգիի աչքերով, մահվան բերանը ինկած իր գավալը: Բացվեցա՞ն անոր կարկամ շրթները այդ հեռավոր պատկերին վրա, ըսելով իր սովորական խոսքը, «Սիրելի գավալս ինչո՞ւ ըլլար այսպես»: Խեղճ մայրեր, որքան քիչ են բառերը տալու ուժգնությունը ձեր ներսեն բռնկած զգացումին, որ պիտի այրի առանց սպառելու, վասնզի մոխիրը պատրանքն է անոր:

Կեսօրվան մոտ էր, հասած էին արդեն «Ագուռ Սալվիե»-ի աղբյուրին քովը: Առաքյալը ակամա իր շուրջը նայեցավ, իրեն այնպես կթվեր թե քանի մը սքողված բարեկամներ, ընկճված ու վշտահար, իրեն կնայեին: Անոնց շրթները կողոպտին աղոթքի մրմունջներով: Հակառակ խոշտանգումներուն և հոգեկան տառապանքին, առաքյալը կպահեր իր կորովագեղ կեցվածքը:

Պատրաստ էր արդեն կոճղը, որուն քով կարշնեղ դահիճը տապարին կրթնած կրկենար: Սակայն առաքյալը դուրս էր պահեն, անհկա սևեռափք կնայեր իր առջև բացվող հարաճուն լույսին՝ որ երկինքեն վար կիջներ հսկա ամպհովանիի մը նման: Չփորձեց նույնիսկ վեր առնելու իր ուժատ կուպերը, վախճալով թե կկորսնցներ տեսիլքը: Հեռո տեսավ ծավալող լույսին մեջ՝ Նազովրեցի Հիսուսին դեմքը՝ որ իրեն կը ծպտեր: Պողոս արցունք տեսավ անոր աչքերուն խորը, երբ իր վիզին կընդուներ դահիճին տապարը:

